ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԿԱՄԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՓՐԿԱՐԱՐ ՈՒԺԵՐԻ ԵՎ ՓՐԿԱՐԱՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1.	**Իրավական ակտի անհրաժեշտությունը**
	ՀՀ կառավարության 18.08.2021 N 1363-Ա որոշման հավելվածով սահմանված՝ ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6-րդ «Աշխատանք և սոցիալական պաշտպանություն» ենթաբաժնում նախատեսվել է ամրագրել կամավորական գործունեությունը և կամավոր աշխատանքը կարգավորող միասնական իրավական մեխանիզմներ: Այս առումով, ՀՀ կառավարության 18.11.2021 N 1902-Լ որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության 2021-2026 թթ. գործունեության միջոցառումների ծրագրի 1-ին հավելվածի 4-րդ՝ «Կամավորության մշակույթի տարածման և խրախուսման նպատակով՝ կամավորական գործունեությունը և կամավոր աշխատանքը կարգավորող միասնական իրավական մեխանիզմների

	ամրագրում» նպատակի շրջանակներում նախատեսվել է նաև 4.1-ին՝ ««Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագծի և դրանից բխող ՀՀ մի շարք օրենքներում փոփոխություններ նախատեսող օրենքների նախագծերի փաթեթի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ» միջոցառումը (վերջնաժամկետ 2022 թ. մարտի 3-րդ տասնօրյակ): **«Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» օրենքի նախագծի մշակումը բխում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջից,** համաձայն որի՝ **<u>կամավոր և օգնություն ցուցաբերելու նպատակով աշխատանքների կատարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով</u>**: Այն բխում է նաև Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի (այսուհետ՝ Խարտիա) 14-րդ հոդվածի 2-րդ պարբերության (սոցիալական ապահովության ծառայությունների ստեղծման և պահպանման գործին հանրության մասնակցության ապահովումը) պահանջից: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետությունը, 2005 թ. դեկտեմբերին վավերացնելով «Երիտասարդների անդրազգային երկարաժամկետ կամավորական ծառայության խթանման մասին» Եվրոպական կոնվենցիան, ստանձնել է կամավորությունը խթանելու և խրախուսելու պարտականություն: Նման պարտականություն է սահմանված նաև «Կամավորականությանն աջակցելու» Միացյալ ազգերի կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ) հանձնարարագրով (2002 թ. հունվարի 10): «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» օրենքի նախագծի մշակումը **պայմանավորված է նաև կամավոր աշխատանքի բնագավառի միասնական իրավական հիմքերի սահմանման, ներկայում կամավորի ներգրավման կամ կամավորի օգնության կարիք ունեցող, սակայն իրավական հիմքեր չունեցող կազմակերպությունների համար նման իրավասության սահմանման և ոլորտում առկա՝ կամավորության մշակույթի զարգացմանն ու ներդրմանը խոչընդոտող այլ խնդրիների լուծման անհրաժեշտությամբ:**

	Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն, որ հասարակության սոցիալ-տնտեսական կյանքին մասնակցելու, մարդկային և սոցիալական կապիտալ ձևավորելու և աշխատաշուկային ծանոթանալու արդյունավետ միջոցներից է կամավորությունը, ՀՀ կառավարության 05.12.2019 N 1753-Լ որոշման 1-ին հավելվածով հաստատված «Աշխատի'ր, Հայաստան» ռազմավարությամբ նախատեսվել է կամավորության ինստիտուտի զարգացմանն ուղղված օրենսդրական և ինստիտուցիոնալ կարգավորումների մշակում և ներդրում (1-ին նպատակ, 1.7-րդ գործողություն) միջոցառումը: *** **<u>Հարկ է նշել նաև, որ ԱԺ գլխադասային հանձնաժողովի հետ 2023 թվականի փետրվարին տեղի ունեցած քննարկումների արդյունքներով պայմանավորված՝ կամավորական գործունեության վերաբերյալ կարգավորումներն ընդհանրապես հանվել են նախագծերի փաթեթից և նախագիծը վերանվանվել է «Կամավոր աշխատանքի մասին» օրենքի նախագիծ (այսուհետ՝ Նախագիծ) վերնագրմամբ:</u>**
2.	**Ընթացիկ իրավիճակը և խնդիրները**
	Կամավոր աշխատանքը կամավորության վրա հիմնված, հանրօգուտ, անվարձահատույց, ոչ պարտադիր կամ ոչ հարկադիր աշխատանք է, որը մշտապես եղել և մնում է քաղաքացիական հասարակության ուշադրության ներքո: Ուսունասիրելով ՄԱԿ-ի կամավորության վերաբերյալ զեկույցները, այդ թվում՝ «Կամավորության կարևորման և դրանում հասարակական ներգրավվածության դերի բարձրացմանն աջակցելու» վերաբերյալ ՄԱԿ-ի կողմից 2015 թվականին մշակված փաստաթուղթը, ՄԱԿ-ի «Կամավորությունն ու գլոբալ նպատակները» 2017 թ. աշխատությունը, Աշխատանքի վիճակագիրների 19-րդ միջազգային կոնֆերանսի 2013 թ. զեկույցը (Աշխատանքի միջազգային կազմակերպություն (այսուհետ՝ ԱՄԿ), վիճակագրության ստորաբաժանում)՝ հարկ է նշել. ՄԱԿ-ի կողմից հատկապես առանձնացվում է այն մոտեցումը, որ կամավորությունը պետք է աջակցի կրթություն (միջնակարգ և բարձրագույն)-

	աշխատավայր անցմանը, կրթական ենթակառուցվածքների ձևավորմանը և զարգացմանը, քաղաքացիական ակտիվ հասարակություն ձևավորելուն, մշակութային բազմազանության նկատմամբ հարգանքի, հասարակության տարբեր շերտերում (ներառյալ՝ կանանց, երիտասարդության, հաշմանդամություն ունեցող անձանց և սոցիալական այլ խմբերի նկատմամբ) ոչ խտրական վերաբերմունքի ձևավորմանը: Աշխատանքի վիճակագիրների 19-րդ միջազգային կոնֆերանսի զեկույցում (ԱՄԿ, վիճակագրության ստորաբաժանում, 2013 թվական) նշվել է **կամավոր աշխատանքի՝ ոչ պարտադիր** լինելու մոտեցումը, որը բնութագրվում է որպես կամավորության հիմքով կատարվող աշխատանք՝ առանց **քաղաքացիական (հասարակական), իրավական կամ վարչական որևէ պահանջի (ակնկալիքի): Նշվում է նաև, որ կամավոր աշխատանքը չի կարող մաս կազմել դատավճռով հասարակական աշխատանքների, հիմնարկներում պատիժ կրող անձանց անվարձահատույց աշխատանքների, համայնքային պարտադիր գործունեության կամ կրթական պարտադիր ծրագրի և հանդիսանալ որոշակի մասնագիտության վկայական ստանալու համար պարտադիր նախադրյալ:** **Կամավոր աշխատանքներում չեն ներառվում նաև զինվորական ծառայության կամ պետական այլ ծառայության օրենքով սահմանված կարգով իրականացվող չվարձատրվող աշխատանքները:** *** ԱՄԿ-ի կողմից նշվում է նաև, որ անկախ կամավոր աշխատանքի անվարձահատույց լինելու հանգամանքից, կամավորներն՝ իրենց կամավոր աշխատանքների իրականացման ընթացքում, **կարող են ստանալ որոշակի ֆինանսական միջոցներ,** օրինակ, սնվելու, կացության հետ կապված ծախսերը կամ կամավոր աշխատանքի վայր գնալու և հետ վերադառնալու հետ կապված ճանապարհածախսը կամ այդ աշխատանքների հետ կապված տրանսպորտային ծախսերը հատուցելու նպատակով, ինչպես նաև ունենալու բժշկական ապահովագրության, վնասի հատուցման երաշխիքներ: Նրանք նաև կարող են ստանալ սիմվոլիկ հուշանվերներ իրենց կամավոր աշխատանքի համար:

***

Երկրում կամավոր աշխատանքի հետ կապված հարաբերություններն ունեն սուղ, դրվագային կարգավորումներ, ըստ էության, բացակայում են կամավորության մշակույթի զարգացման ու տարածման համար միասնական իրավական հիմքերը: Այնուամենայնիվ, կամավորներ ներգրավելու հետ կապված որոշ ընդհանրական կարգավորումներ առկա են բարեգործության ոլորտում բարեգործական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների համար և առավել որոշակի, ընդ որում՝ պայմանագրային կարգավորումներ, առկա են հասարական կազմակերպությունների համար:

«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով թույլատրվում է հասարակական կազմակերպություններին իրենց ոչ ձեռնարկատիրական գործունեության մեջ ներգրավել կամավորներ: Շաբաթական 20 ժամը գերազանցող կամավոր աշխատանքի դեպքում սահմանված են կամավորի հետ պայմանագիր կնքելու, կամավոր աշխատանքի մասին պայմանագրի բովանդակության, կամավոր աշխատանքի կատարման հետ կապված փոխհատուցման որոշակի կարգավորումներ: Հարկ է նշել, որ **մինչև 20 ժամ ծանրաբեռնվածությամբ հասարակական կազմակերպություններում կամավոր աշխատանք կատարողների համար որևէ իրավական երաշխիք օրենքով ամրագրված չէ:**

Բարեգործության բնագավառի ՀՀ օրենսդրությամբ սահմանված են կամավորի հասկացությունը, բարեգործություն ստացողների շրջանակը, որոնց օգտին կամավորների կողմից կատարվում են անհատույց աշխատանքներ, բարեգործական կազմակերպությունները, որոնք կարող են ստեղծվել հասարակական միավորումների, հիմնադրամների կամ օրենքով նախատեսված այլ ձևերով: Սահմանված են նաև բարեգործական որակված ծրագրերի շրջանակներում ներգրավված կամավորների հաշվառման և խրախուսման վերաբերյալ որոշակի օրենսդրական կարգավորումներ, **սակայն սահմանված չէ ստույգ ընթացակարգ, այդ թվում՝ սահմանված չեն պայմանագրային կարգավորումներ, կողմերի իրավունքներ և պարտականություններ,**

	սոցիալական երաշխիքներ, ծախսերի հատուցման վերաբերյալ կարգավորումներ: **Հարկ է նշել, որ հիմնադրամների կամ օրենքով նախատեսված այլ ձևերով ստեղծված կազմակերպությունների համար կամավորների հետ կապված օրենսդրական կարգավորումներ սահմանված չեն:** **Էական նշանակություն ունի նաև այն, որ առկա օրենսդրական կարգավորումներով հստակ տարանջատված չեն հասարակական կազմակերպության կողմից մինչև շաբաթական 20 ժամ ծանրաբեռնվածությամբ ներգրավված կամավորները, որոնք կամավոր աշխատանքների են ներգրավվում առանց պայմանագրի և անօրինական աշխատողները,** սահմանված չեն ոլորտում գործունեություն ծավալող բոլոր սուբյեկների (կամավոր ներգրավելու անհրաժեշտություն ունեցող կազմակերպություններ, կամավոր աշխատանք կատարող անձինք) համար հավասար պայմաններ և հնարավորություններ, սահմանված չեն նաև կամավոր աշխատանքի հետ կապված հարաբերությունները և, հետևաբար, դրանք հստակ տարանջատված չեն աշխատանքային հարաբերություններից: «Պրոբացիայի մասին» օրենքի գործող կարգավորումներով էլ, օրինակ, սահմանված են **պրոբացիայի ծառայության կամավորի վերաբերյալ որոշակի կարգավորումներ,** մասնավորապես սահմանված է պրոբացիայի ծառայության կամավորի հասկացությունը, նախատեսված են պայմանագրային կարգավորումներ և այդ կամավորների համար որոշակի իրավունքներ և պարտականություններ: *** Այսպիսով, ինչպես նշվեց, դեռևս առկա են օրենքով կարգավորման ենթակա որոշակի խնդիրներ, որոնք խոչընդոտում են ոլորտի կայացմանն ու հետագա զարգացմանը: Մասնավորապես, դրանցից **կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական խնդիրները՝** 1) կամավոր աշխատանք կատարելու հետ կապված հարաբերություններն աշխատանքային հարաբերություններից, ինչպես նաև կամավոր աշխատանքն

	անօրինական կամ վարձու աշխատողի աշխատանքից տարանջատելու ոչ լիարժեք իրավական կարգավորումները, 2) կամավոր և օգնություն ցուցաբերելու նպատակով կատարված աշխատանքները միմյանցից տարանջատելու մեխանիզմների բացակայությունը, 3) կամավոր աշխատանքի սուբյեկտների (կազմակերպություններ, կամավորներ) սահմանման, ինչպես նաև կամավորներ ներգրավելու իրավասություն ունեցող կազմակերպությունների շրջանակի ամրագրման անհրաժեշտությունը, 4) կամավորի և կազմակերպության միջև փոխհարաբերությունների պայմանագրային ոչ ամբողջական և ոչ միասնական օրենդրական կարգավորումները, 5) կամավոր աշխատանքի սուբյեկտների հիմնական իրավունքների և պարտականությունների ամրագրման անհրաժեշտությունն ու օրենսդրական կարգավորումների բացակայությունը, 6) կամավոր աշխատանքի հետ կապված ծախսերի վճարման կամ փոխհատուցման մեխանիզմների բացակայությունը, 7) կամավոր աշխատանքի ընթացքում կամավոր աշխատանք կատարողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման, կամավոր աշխատանք կատարողների կրած վնասի հատուցման մեխանիզմների, ինչպես նաև կամավոր աշխատանքի հետ կապված հնարավոր ռիսկերի ապահովագրության բացակայությունը, 8) կամավոր աշխատանքներում քաղաքացիական հասարակության առավել լայն շրջանակների ներգրավման իրավական խթանիչ մեխանիզմների բացակայությունը, 9) կամավոր աշխատանքներն օտարերկրյա պետություններում, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց, օտարերկրյա պետությունների քաղաքացիների կամավոր աշխատանքը Հայաստանի Հանրապետությունում կազմակերպելու վերաբերյալ ամբողջական օրենսդրական կարգավորումների,

	ինչպես նաև նրանց ժամանակավոր կացության կարգավիճակի տրամադրման համար իրավական հիմքերի բացակությունը, 10) կամավոր աշխատանքի հետ կապված իրավական, սոցիալական, ինչպես նաև այլ երաշխիքների ապահովման անհրաժեշտությունը:
3.	**Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը**
	Պայմանավորված կամավորության ինստիտուտի կայացման և քաղաքացիական հասարակության մեջ վերջինիս դերի բարձրացման կարևորությամբ՝ 1985 թվականին դեկտեմբերի 5-ը ճանաչվել է տնտեսական և սոցիալական զարգացմանն աջակցող Կամավորների միջազգային օր, իսկ 2001 թվականը հայտարարվել Կամավորների միջազգային տարի: 2011 թվականը տաս տարի անց կրկին հայտարարվել է Կամավորների միջազգային տարի, իսկ Եվրոպական խորհրդի կողմից՝ Կամավորության եվրոպական տարի (այդ շրջանակներում կազմակերպվեցին կամավորությունը խրախուսող տարբեր միջոցառումներ): Կամավորության ինստիտուտի կայացման և քաղաքացիական հասարակության մեջ վերջինիս դերի բարձրացման մեջ մեծ դերակատարում ունեցավ նաև ՄԱԿ-ի Գլխավոր Վեհաժողովը՝ 2001 թ. դեկտեմբերի 5-ին ընդունելով N 56/38 բանաձևը, որում կոչ արեց պետություններին ստեղծել համապատասխան օրենսդրական հիմք՝ ոգեշնչելով մարդկանց կամավորելու իրականացնելու հարցում: Այնուհետև ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովի կողմից ընդունվեցին 2012 թ. դեկտեմբերի 20-ի N 67/138, ինչպես նաև 2015 թ. դեկտեմբերի 7-ի N 70/129՝ աշխարհի խաղաղության պահպանությանն ու զարգացմանը կամավորներին ինտեգրելու վերաբերյալ բանաձևերը: ՄԱԿ-ի հանձնարարականներով անդամ երկրներին հանձնարարվեց **կամավորությունը ներառել իրենց սոցիալ-տնտեսական զարգացման ազգային ռազմավարություններում և ծրագրերում, բացառել ուղղակի և անուղղակի ձևով կամավորությանը խանգարող, կամավոր աշխատանքը ոչ շահավետ ձևով ներկայացնող բոլոր խոչընդոտները**, ինչպես նաև, **հարգելով կամավորների լիիրավ անկախությունը, նրանց տրամադրել իրավական կարգավիճակ և պատշաճ սոցիալական պաշտպանություն,** կամավորության

	ողջ ներուժը օգտագործելու նպատակով՝ բնակչության բոլոր սոցիալական խմբերին (այդ թվում՝ երիտասարդներին, տարեցներին, կանանց, միգրանտներին, փախստականներին, հաշմանդամություն ունեցող անձանց, ազգային փոքրամասնություններին) աջակցել և ներառել կամավորության մեջ՝ ապահովելով կամավորության համար հավասար պայմաններ և հնարավորություններ: Կամավորության խթանման հարցում կարևոր դերակատարում ունեցավ նաև **Եվրոպայի Խորհուրդը, որը ևս կոչ արեց անդամ երկրներին իրենց օրենքներից և իրավակիրառական պրակտիկայից բացառել այն բոլոր արգելքները, որոնք կարող են ուղղակի կամ անուղղակի կերպով խոչընդոտել անձանց՝ կամավորությամբ զբաղվելուն:** Նշված բանաձևերով առաջնորդվելով և կարևորելով կամավորությունն ազգային ռազմավարություններում ինտեգրելու օրակարգը՝ **Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի կողմից 2005 թ. ապրիլի 16-ին ընդունվել է «Կամավորության մասին» N 42-15 օրինակելի օրենքը,** որով **սահմանվել են ինչպես կամավորների, կամավորական կազմակերպությունների հասկացություններն, այնպես էլ՝ նախատեսվել են մի շարք օրինակելի երաշխիքներ և կարգավորումներ կամավորության համար (օրինակելի պայմանագրային կարգավորումներ, կողմերի իրավունքներ և պարտականություններ, կամավորության հետ կապված ծախսերի կանոնակարգման, ապահովագրության, վնասի հատուցման և այլ կարգավորումներ):** *** 2016 թ. հունվարի 1-ից պաշտոնապես ուժի մեջ են մտել 2015 թ. սեպտեմբերին Նյու Յորքում կայացած՝ ՄԱԿ-ի Կայուն զարգացման գագաթնաժողովին աշխարհի երկրների առաջնորդների ընդունած՝ **«Վերափոխենք աշխարհը. կայուն զարգացման օրակարգ 2030-ում» ներառված 17 նպատակները,** որոնք նպատակաուղղված են վերացնելու աղքատությունը՝ իր բոլոր ձևերով ու դրսևորումներով, պայքարելու

	անհավասարությունների դեմ և լուծելու կլիմայի փոփոխության հետ կապված խնդիրներն առաջիկա 15 տարվա ընթացքում: Այստեղ հաշվի է առնված, որ աղքատության վերացումը պետք է ուղեկցվի այնպիսի ռազմավարությունների կիրառմամբ, որոնք կնպաստեն տնտեսական աճի խթանմանը և սոցիալական մի շարք կարիքների բավարարմանը, այդ թվում՝ կրթության, առողջապահության, սոցիալական պաշտպանության և աշխատանքի ոլորտներում՝ միաժամանակ լուծելով կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի հետ կապված խնդիրները: **ՄԱԿ-ի կողմից (Կամավորականությունն ու գլոբալ նպատակները աշխատություն, 2017 թ.) առանձնահատուկ ներկայացվել է այն մոտեցումը, որ առանց հասարակության լայն շերտերի ներգրավման անհնար է հասնել նշված 17 նպատակներին, և, որ կամավորության ինստիտուտն ուժեղ ազդակ է կայուն զարգացման համար և կարող է տեխնիկական աջակցություն ապահովել և գործունեություն ծավալել բոլոր 17 նպատակներն իրացնելու համար:** Հետևաբար, ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովի՝ 2015 թ. դեկտեմբերի 7-ի N 56/38 բանաձևում (աշխարհի խաղաղության պահպանությանն ու զարգացմանը կամավորներին ինտեգրելու վերաբերյալ) հատուկ կարևորվել է ԿԶՆ 17 նպատակների իրացմանը կամավորությանն ինտեգրելը՝ հատկապես զարգացող երկրներում: Կայուն զարգացման նպատակները դիտվել են որպես գլոբալ համագործակցության կոչ, որտեղ լիիրավ գործընկերոջ դեր է հատկացվել կամավորական միություններին (A/RES/70/1 հանձնարարական, կետ 45): *** Որպես ազգային և միջազգային տնտեսության զարգացմանը նպաստող կարևորագույն ռեսուրս և քաղաքացիական ակտիվության դրսևորման հիմնարար տարր՝ **կամավոր աշխատանքը հստակ կարգավորված է աշխարհի մի շարք երկրներում,** ինչպես, օրինակ, **ԱՄՆ-ում, Շվեդիայում, Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Ուկրաինայում, Գերմանիայում, Չեխիայում, Լեհաստանում, Հունգարիայում, Իսպանիայում, Իտալիայում, Լատվիայում, Լյուքսեմբուրգում, Պորտուգալիայում, Ռումինիայում և այլ երկրներում:**

Ուսումնասիրված երկրների փորձը ցույց է տալիս, որ այն երկրներում, որտեղ կան կամավորության ինստիտուտի ամուր ձևավորված ազգային ավանդույթներ, **կամավորներն անմիջականորեն պաշտպանված են օրենքով:**

Կամավորությունը առանձին օրենքով է կարգավորված, օրինակ, Լիտվայում, Ռուսաստանի Դաշնությունում, Ուկրաինայում, Սերբիայում, Բելիգիայի Թագավորությունում, Մակեդոնիայում, Մոնտենեգրոյում և այլ երկրներում:

Կամավորի իրավական կարգավիճակի օրենսդրական ամրագրման բացակայությունն էական խոչընդոտներ է առաջացնում կամավորներին անօրինական աշխատողներից տարանջատելու հարցում: Մեկ այլ խնդիր է, երբ կամավոր աշխատանքների կատարման համար օրենսդրորեն նախատեսված չեն լինում պայմանագրային կարգավորման վերաբերյալ պարտադիր պահանջներ: Ինչն էլ պատճառ է հանդիսանում, որպեսզի կամավորները զրկված լինեն որոշակի իրավական, սոցիալական և այլ երաշխիքներից:

Օրինակ, **Լատվիայում, Լիտվայում, Ռումինիայում, Շվեդիայում, Չեխիայում, ինչպես նաև այլ երկրներում մինչև կամավոր աշխատանքներ կատարելը նախատեսված են պարտադիր պայմանագիր կնքելու վերաբերյալ կարգավորումներ:**

***

<u>Կամավորությունը լուրջ սոցիալ-տնտեսական ազդեցություն ունի:</u> **2018 թ. «CAF World Giving Index»-ի տվյալներով 2017 թվականին՝ աշխարհի բնակիչների 20.1 տոկոսն իրականացրել է կամավորություն, որին բաժին է ընկել համաշխարհային համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 3.8 տոկոսը**, 2016 թվականին՝ աշխարհի բնակիչների 20.8 տոկոսն է իրականացրել կամավորություն (բաժին է ընկել ՀՆԱ-ի 3.2 տոկոսը), 2015 թվականին՝ 21.6 տոկոսը (բաժին է ընկել ՀՆԱ-ի 3.5 տոկոսը), իսկ 2014 թվականին՝ 21 տոկոսը (բաժին է ընկել ՀՆԱ-ի 3.6 տոկոսը):

Հարկ է նշել, որ «CAF World Giving Index»-ը յուրաքանչյուր տարի հետազոտում է շուրջ 146 երկրում բնակիչների բարեգործական վարքագծի դրսևորումները:

Այդ երկրների կազմում է նաև Հայաստանի Հանրապետությունը: «CAF World Giving Index»-ի 2018 թ. տվյալներով **146 երկրներից** (ուսումնասիրվել է շուրջ 1.3 մլն մարդու վարքագիծ) **Հայաստանի Հանրապետությունը զբաղեցրել է** 123-րդ տեղը (23 տոկոս) բարեգործական վարքագծով, 100-րդ տեղը՝ (45 տոկոս) մերձավորին օգնելու, 107-րդ տեղը՝ (15 տոկոս) ֆինանսական աջակցություն ցուցաբերելու և **130-րդ տեղը (9 տոկոս) իր ժամանակը կամավոր աշխատանքին նվիրելու առումով** (2013-2017 թթ. ժամանակահատվածի միջին ցուցանիշներ):

***

Այսպիսով, կարևորելով երկրում կամավորության մշակույթի զարգացումն ու տարածումը, ինչպես նաև այդ նպատակով կամավորի ինստիտուտի օրենսդրական համապարփակ կարգավորման անհրաժեշտությունը, հիմք ընդունելով քաղաքացիական հասարակության մեջ առկա զարգացումներն ու մարտահրավերները, դեռևս 2006 թվականին, ապա նաև՝ 2010 թվականին, մշակվել և շրջանառության մեջ են դրվել «Կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագծեր:

Շահագրգիռ քննարկումների ընթացքում ձևավորվել է այն տեսակետը, որ նման օրենքի անհրաժեշտություն չկա՝ պայմանավորված այն հանգամանքով, որ կամավոր աշխատանքի հետ կապված իրավահարաբերություններն արդեն իսկ կարգավորված են «Բարեգործության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում: Արդյունքում, «Կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագիծը հանվել է շրջանառությունից:

2015 թվականին նման օրենսդրական նախաձեռնությամբ հանդես են եկել նաև ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Վահրամ Բաղդասարյանը, Գագիկ Մելիքյանը, Վահրամ Մկրտչյանը, Ռուզաննա Մուրադյանը և Կարինե Պողոսյանը:

	Սակայն, համապատասխան օրենսդրական նախաձեռնությունները չեն ընդունվել: ՀՀ կառավարության 2017 թ.ի մարտի 23-ի նիստի N 12 արձանագրային որոշման 3-րդ կետով ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի հայեցակարգը, որի հիման վրա ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակվել և շրջանառվել է «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի և դրանից բխող մի շարք այլ օրենքներում փոփոխություններ նախատեսող նախագծերի փաթեթը, որը 2018 թվականի օգոստոսին հանվեց շրջանառությունից՝ հետագա քննարկումների անհրաժեշտությամբ պայմանավորված: Արդյունքում, **ոլորտի ոչ ամբողջական կարգավորումն ու դրանում առկա մի շարք խնդիրները չլուծվեցին և ներկայում էլ խոչընդոտում են կամավորության ինստիտուտի կայացմանն ու հետագա զարգացմանը՝ պահանջելով համապատասխան լուծումներ:** *** Միևնույն ժամանակ, **ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից ներկայացված տվյալների համաձայն**՝ աշխատաշուկայի նոր զարգացումները պատշաճ կերպով արտացոլելու, աշխատուժի վիճակագրության արդիականությունը և միջազգային համադրելիությունն ապահովելու նպատակով 2018 թվականից վերանայվել է Աշխատուժի հետազոտության հիմքում ընկած մեթոդաբանությունը, որի համար հիմք են հանդիսացել 2013 թվականի Աշխատանքի վիճակագիրների միջազգային 19-րդ համաժողովում ընդունված «Աշխատանքի, զբաղվածության և աշխատուժի թերօգտագործման վիճակագրության մասին» (19-րդ ԱՎՄՀ) բանաձևի առանցքային դրույթները: 19-րդ ԱՎՄՀ ներդրման շրջանակներում, համաձայն նոր ստանդարտի, **2018 թվականից ի վեր Հայաստանի Հանրապետությունում ընդլայնվել է «աշխատանքային գործունեություն» հասկացության շրջանակը**՝ չափելի դարձնելով աշխատանքի բոլոր ձևերը՝ հստակ տարբերակվել են՝ ըստ վճարվող (զբաղվածություն) և չվճարվող աշխատանքների (սեփական սպառման համար

	ապրանքների արտադրություն և ծառայությունների տրամադրում, չվարձատրվող աշխատանքային պրակտիկա**, կամավոր աշխատանք**): Այսպիսով, **«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը, 2018 թվական» վիճակագրական գրքույկի համաձայն**՝ 2018 թ. առաջին եռամսյակի տվյալներով ՀՀ աշխատանքային գործունեության մեջ ներգրավված բնակչության (15-74 տարեկան բնակչություն) 10.7 տոկոսը՝ 219,600 մարդ, կատարել է կամավոր աշխատանք: **Առավել ամփոփված տվյալներ ներկայացվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի հաջորդ տարիների վիճակագրական գրքույկներում:** **Մասնավորպես՝ «Աշխատանքի շուկան Հայաստանում, 2019», «Աշխատանքի շուկան Հայաստանում, 2020», «Աշխատանքի շուկան Հայաստանում, 2021» վիճակագրական գրքույկների տվյալների համաձայն՝** **ՀՀ աշխատանքային գործունեության մեջ ներգրավված բնակչության (15-74 տարեկան բնակչություն) 11.3 տոկոսը (247,200 անձ)՝ 2018 թ. ընթացքում, 11.5 տոկոսը (252,500 անձ)՝ 2018 թ. ընթացքում, 11.1 տոկոսը՝ 245,000 անձ)՝ 2019 թ. ընթացքում կատարել է կամավոր աշխատանք:** Նշվել է նաև, որ անձը կարող է ներգրավված լինել աշխատանքային գործունեության մեկ կամ մի քանի ձևերում՝ ցանկացած համակցությամբ: Օրինակ, մարդը կարող է լինել զբաղված, լինել կամավոր կամ սեփական սպառման համար ապրանքներ արտադրել: Այս առումով, **ՀՀ աշխատանքային գործունեության մեջ ներգրավված բնակչության (15-74 տարեկան բնակչություն)՝** **ա. 2018 թ. ընթացքում** կամավոր աշխատանք կատարած 247,200 անձանցից 123,500-ը (49.95 տոկոսը) եղել են միաժամանակ զբաղվածներ, 36,100-ը (14.6 տոկոսը)՝ գործազուրկներ, 87,700-ը (35.5 տոկոսը)՝ աշխատուժից դուրս բնակչություն, **բ. 2019 թ. ընթացքում** կամավոր աշխատանք կատարած 252,500 անձանցից 135,100-ը (53.5 տոկոսը) եղել են միաժամանակ զբաղվածներ, 32,500-ը (12.9 տոկոսը)՝ գործազուրկներ, 84,900-ը (33.6 տոկոսը)՝ աշխատուժից դուրս բնակչություն,

գ. 2020 թ. ընթացքում կամավոր աշխատանք կատարած 245,000 անձանցից 144,500-ը (58.97 տոկոսը) եղել են միաժամանակ զբաղվածներ, 30,700-ը (12.5 տոկոսը)՝ գործազուրկներ, 69,800-ը (28.48 տոկոսը)՝ աշխատուժից դուրս բնակչություն:

Ընդ որում՝ կամավոր աշխատանք է դիտարկվել այլոց համար կատարվող ոչ հարկադիր աշխատանքը:

Միաժամանակ, նույն գրքույկներում ներկայացվել է նաև **չվարձատրվող աշխատանքային պրակտիկայի վերաբերյալ տվյալներ**, որի համաձայն՝ նման պրակտիկա է համարվել՝ այլոց համար կատարվող **չվճարվող աշխատանքը՝ աշխատանքային փորձ, հմտություն ձեռք բերելու նպատակով:**

ՀՀ աշխատանքային գործունեության մեջ ներգրավված բնակչության (15-74 տարեկան բնակչություն)՝

ա. 2018 թ. ընթացքում 5,600 անձ, ներգրավված է եղել չվարձատրվող աշխատանքային պրակտիկայում: Նշված 5,600 անձանցից 2,000-ը (35.7 տոկոսը) եղել են միաժամանակ զբաղվածներ, 1,900-ը (33.9 տոկոսը)՝ գործազուրկներ, 1,600-ը (28.6 տոկոսը)՝ աշխատուժից դուրս բնակչություն,

բ. 2019 թ. ընթացքում 3,800 անձ ներգրավված է եղել չվարձատրվող աշխատանքային պրակտիկայում: Նշված 3,800 անձանցից 1,000-ը (26.3 տոկոսը) եղել են միաժամանակ զբաղվածներ, 900-ը (23.7 տոկոսը)՝ գործազուրկներ, 1,800-ը (47.4 տոկոսը)՝ աշխատուժից դուրս բնակչություն,

գ. 2020 թ. ընթացքում 800 անձ, ներգրավված է եղել չվարձատրվող աշխատանքային պրակտիկայում: Նշված 800 անձանցից շուրջ 100-ը (12.5 տոկոսը) եղել են միաժամանակ զբաղվածներ, շուրջ 400-ը (50 տոկոսը)՝ գործազուրկներ, շուրջ 200-ը (25 տոկոսը)՝ աշխատուժից դուրս բնակչություն:

**

Հարկ է նշել նաև, որ **«Աշխատաշուկայի քարտեզագրում ՀՀ Շիրակի, Լոռու, Տավուշի և Գեղարքունիքի մարզերում» 2019 թվականին ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի աջակցությամբ պատրաստված ուսումնասիրության համաձայն**՝ այդ մարզերում կամավորները հիմնականում զբաղվում են վարչական, կազմակերպչական և սոցիալական գործունեությամբ, որոնք

	հիմնականում ուղղված են աշխատանք գտնելուն կամ զբաղմունք ունենալուն, իրենց մասնագիտական գիտելիքներն օգտագործելուն, նոր հմտություններ և գիտելիքներ ստանալուն, նոր ընկերներ ձեռք բերելուն և հնարավոր գործատուներ գտնելուն: Ուսումնասիրության ընթացքում թիրախային մարզերից յուրաքանչյուրում առանձնացվել է մեկական խոշոր հասարակական կազմակերպություն (ՀԿ), որն աշխատում է կամավորների հետ և կամավորության ոլորտում, նրանց ներկայացուցիչների հետ խորքային հարցազրույցներ են անցկացվել: Հարցված բոլոր ՀԿ-ներն ընդգծել են այն փաստը, որ երիտասարդներն իրենց դիմում են կամավորության նպատակով մասնագիտական հմտությունները բարելավելու, անհրաժեշտ փափուկ հմտություններ (անգլ. soft skills) ձեռք բերելու, ինչպես նաև աշխատանքային փորձ ստանալու համար: Օրինակ, Շիրակի և Տավուշի մարզում օտարերկրացիների ներկայությունը գրավում է կամավորներին, քանի որ նրանք սեփական հաղորդակցության և լեզվական հմտությունների բարելավման, նաև մասնագիտական ծանոթությունների ցանցի ընդլայնման հնարավորություն են տեսնում: Բոլոր ՀԿ-ները նշել են, որ կամավորները հիմնականում վարչական և կազմակերպչական աշխատանքներում են ներգրավված, ընդգծելով այն փաստը, որ նրանք իրենց ներուժի զարգացման ուղղությամբ են աշխատում: Կամավորները տարբեր տեսակի աշխատանք են կատարում՝ մարքեթինգ սոցիալական մեդիաներում, սոցիալական աշխատանք, դասընթացների անցկացում և այլն: Բոլոր կազմակերպությունները մատնանշել են այն փաստը, որ **կամավորությունն օգնում է մարդկանց աշխատանք գտնել, քանի որ կամավորները կարող են աշխատանք փնտրելու համար անհրաժեշտ հմտություններ ձեռք բերել և բարելավել իրենց փափուկ հմտությունները:** Բոլոր ՀԿ-ները հայտնել են նաև համալսարանների հետ ընթացիկ համագործակցության և իրենց մոտ որպես կամավոր ներգրավված ուսանողների մասին: Շիրակի և Գեղարքունիքի մարզում ուսանողները՝ որպես **աշակերտ** են ներգրավվում կազմակերպություններում և այդ ընթացքում որոշակի հմտություններ են ձեռք բերում **(նշենք, որ այդ հարաբերություններն արդեն իսկ կարգավորված են ՀՀ աշխատանքային**

	օրենսգրքի 201.1-ին հոդվածով), որոնք չեն դասավանդվում համալսարաններում, օրինակ՝ առաջնորդության և կոնֆլիկտների կառավարման, ինչպես նաև գործնական աշխատանքային հմտություններ: **Բոլոր ՀԿ-ների ներկայացուցիչները համաձայնել են, որ կամավորության զարգացման և խթանման համար անհրաժեշտ է. (1) ընդունել օրենք կամավորության մասին, (2) հանրային պատշաճ իրազեկում իրականացնել՝ կամավորությունը խրախուսելու և դրա օգուտներն ու օգտակարությունը բացատրելու նպատակով՝** պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և մասնավոր հատվածի ջանքերի շնորհիվ:
4.	**Կարգավորման նպատակը և բնույթը**
	Օրենքի ընդունման նպատակը կամավոր աշխատանքի ամբողջական օրենսդրական կարգավորումն է, այդ թվում՝ միասնական իրավական կարգավորումների սահմանումն ու առկա իրավական հիմքերի ներդաշնակեցումը, որը նաև համապատասխան իրավական հիմքեր կստեղծի կազմակերպությունների կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ինստիտուտի զարգացման համար, օրինակ, կազմակերպությունների կամավորական կամ բարեգործական ծրագրերի միջոցով տարբեր սոցիալական խմբերին՝ հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցներին, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց, սոցիալական աջակցության կարիք ունեցող այլ անձանց սոցիալական պաշտպանությանը մասնակցելու միջոցով: *** **Օրենքի նախագծով առաջարկվող օրենսդրական կարգավորումները հիմնականում նպատակաուղղված են կամավորության ինստիտուտի կայացմանը**, այդ թվում՝ հասարակության լայն շերտերի կամավոր աշխատանքների ներգրավելու համար անհրաժեշտ նախապայմաններ ամրագրելուն, հասարակության մեջ խոցելի խմբերի նկատմամբ ոչ խտրական վերաբերմունքի, փոխօգնության մթնոլորտի ձևավորմանը, բնակչության կյանքի որակի բարձրացմանն ու կենսակերպի բարելավմանն աջակցելուն, ինչպես նաև ինքնակազմակերպվող ու քաղաքացիական ակտիվ հասարակություն ձևավորելուն:

	Մասնավորապես, Օրենքի ընդունմամբ կամրագրվեն. 1) կամավոր աշխատանք կատարելու հետ կապված հարաբերություններն աշխատանքային հարաբերություններից **(հստակ ամրագրվելու է, որ կամավոր աշխատանք կատարելու հետ կապված հարաբերությունները հանդիսանում են քաղաքացիական-իրավական հարաբերություններ),** կամավոր աշխատանքն անօրինական կամ վարձու աշխատողի աշխատանքից տարանջատելու լիարժեք իրավական կարգավորումները, 2) կամավոր և օգնություն ցուցաբերելու նպատակով կատարված աշխատանքները**,** 3) կամավոր աշխատանքի սուբյեկտները (Կազմակերպությունները, կամավորները), 4) կամավոր աշխատանքի հետ կապված սահմանափակումներն ու առանձնահատկությունները, 5) կամավորի և կազմակերպության միջև փոխհարաբերությունների պայմանագրային կարգավորումները, 6) կամավոր աշխատանքի կատարման հետ կապված ծախսերի հատուցման մեխանիզմները, գործուղման ծախսերի մասով հարկային արտոնությունների սահմանումը, 7) կամավոր աշխատանքի ընթացքում կամավորների և այլ անձանց առողջության և անվտանգության ապահովման երաշխիքները, 8) կամավոր աշխատանք կատարող անձի կրած վնասի հատուցման իրավական հիմքերը, 9) կամավոր աշխատանքի հետ կապված հնարավոր ռիսկերից (դժբախտ դեպքերից, մասնագիտական հիվանդություններից, երրորդ անձանց վնաս պատճառելու ռիսկի հետ կապված քաղաքացիական պատասխանատվությունից) ապահովագրության կարգավորումները,

	10) կամավոր աշխատանքի սուբյեկտների հիմնական իրավունքները և պարտականությունները, պատասխանատվությունն ինչպես միմյանց, այնպես էլ՝ կամավոր աշխատանքի հետ կապված երրորդ անձանց նկատմամբ: *** Նախատեսվել է, որ Կազմակերպության կողմից ներգրավվող **կամավորների հետ կնքվելու են կամավոր աշխատանքի մասին պայմանագրեր:** Օրենքի նախագծով նախատեսվել է նաև այն կազմակերպությունների շրջանակը, որոնք իրավունք են ունենալու, անհրաժեշտության դեպքում, ներգրավելու կամավորների, մասնավորապես, այդ կազմակերպություններն են հանդիսանալու՝ **հանրային իշխանության մարմինները, այդ թվում՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները կամ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող այլ իրավաբանական անձինք կամ հիմնարկները, ինչպես նաև հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող՝ շահույթ ստանալու նպատակ հետապնդող իրավաբանական անձինք:** *** Այսպիսով, վերը նշվեցին այն հիմնական խնդիրները, որոնց լուծմանն ուղղված են լինելու Նախագծով առաջարկվող կարգավորումները: Այդ խնդիրներից են լիարժեք կարգավորումների առկայությունը, մասնավորապես՝ այն հարցում, որ հստակ տարանջատվի կամավոր աշխատանք կատարելու հետ կապված հարաբերություններն աշխատանքային հարաբերություններից, ինչպես նաև կամավոր աշխատանքն անօրինական կամ վարձու աշխատողի աշխատանքից: Հարկ է նշել, որ Աշխատանքային օրենսգրքով այդ տարանջատումը որոշակիորեն տրված է այն առումով, որ Աշխատանքային օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կամավոր և օգնություն ցուցաբերելու նպատակով աշխատանքների կատարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով: Նույն նշված նորմի պահանջից է բխում «Կամավոր աշխատանքի մասին» օրենքի ընդունման անհրաժեշտությունը: Ավելին, հարկ է

	նշել, որ ինչպես կամավոր աշխատանքը դուրս է Աշխատանքային օրենսգրքի կարգավորումների շրջանակներից, այնպես էլ կամավոր աշխատանքի հետ կապված հարաբերությունները դուրս են աշխատանքային հարաբերությունների շրջանակներից: Միաժամանակ, նշենք, որ կամավոր աշխատանքի հետ կապված հարաբերությունները չեն կարող նույնացվել աշխատանքային հարաբերությունների հետ՝ հետևյալ հիմնավորմամբ. Աշխատանքային օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային հարաբերություններն աշխատողի և գործատուի փոխադարձ համաձայնության վրա հիմնված հարաբերություններն են, ըստ որի՝ աշխատողն անձամբ, որոշակի վարձատրությամբ կատարում է աշխատանքային գործառույթներ (որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ կամ պաշտոնում աշխատանք)՝ ենթարկվելով ներքին կարգապահական կանոններին, իսկ գործատուն ապահովում է աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով նախատեսված աշխատանքի պայմաններ: Մյուս կողմից, Օրենսգրքի 216-րդ հոդվածի համաձայն՝ աշխատողը պարտավոր է բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած պարտավորությունները, պահպանել կազմակերպության ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը, կատարել աշխատանքի սահմանված նորմաները, պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման պահանջները, բարեխղճորեն վերաբերվել գործատուի և այլ աշխատողների գույքին, ինչպես նաև մարդկանց կյանքին ու առողջությանը, գործատուի գույքի պաշտպանությանն սպառնացող վտանգի ծագման մասին անմիջապես տեղեկացնել գործատուին: Օրենսգրքի 217-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործատուն պարտավոր է, օրինակ, նախատեսված ժամկետում և սահմանված չափով վճարել աշխատողի աշխատավարձը: Ընդհանուր առմամբ վերը նշված կարգավորումների համատեքստում, հարկ է առանձնացնել այն հիմնաքարային մոտեցումը, որ բուն աշխատանքային

	հարաբերությունների հիմքում, օրինակ, աշխատողի համար դրված է իր աշխատանքի միջոցով վարձատրվելու հանգամանքը, որը ստանալու նպատակով աշխատողը կատարում է գործատուի համար որոշակի աշխատանքներ, պահպանում է աշխատանքային կարգապահությունը, աշխատում է՝ ըստ որոշակի աշխատանքային ժամանակացույցերի, հստակ սահմանված աշխատաժամանակի ռեժիմների տեսակներով: Մնացած կարգավորումները, ըստ էության հանդիսանում են ածանցյալ կարգավորումներ, օրինակ, այդ աշխատանքներն առողջ, անվտանգ միջավայրում կազմակերպելու, աշխատողին հանգիստ տրամադրելու համար: Այս առումով կամավոր աշխատանքի հետ կապված հարաբերությունների հիմքում ընկած սկզբունքները հասկացությունները, կամավոր աշխատանքների կատարման նպատակներն ու կարգը հիմնովին տարբերվում են, մասնավորապես վերջիներիս հիմնաքարում ընկած է, օրինակ, կամավորության վրա հիմնված, հանրօգուտ, ոչ պարտադիր կամ ոչ հարկադիր գործունեություն իրականացնելու կամ աշխատանք կատարելու հանգամանքը: Միաժամանակ, հարկ է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ կամավորի համար Նախագծով նախատեսվող կազմակերպությունը չի հանդիսանալու գործատու, այլ այն հանդիսանալու է սուբյեկտ, որի միջոցով կամ որտեղ կամավորը կատարելու իր կամավոր աշխատանքը: Հարկ է նկատել նաև, որ կամավորի համար սահմանված չեն կարգավորումներ՝ աշխատանքային կարգապահություն պահպանելու կամ աշխատանքային կարգապահությունը խախտելու համար որոշակի պատասխանատվության ենթարկվելու վերաբերյալ: Կամավորների համար Նախագծով նախատեսված չէ նաև, որ վերջինս իր կամավոր աշխատանքները կատարելու է որոշակի հստակ աշխատաժամանակի ռեժիմներով: Այս դեպքում, հարկ է անդրադառնալ, օրինակ, Նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասին, համաձայն որի՝ կամավոր աշխատանքի ընթացքում կամավորի՝ հանգստի կամ սնվելու համար ընդմիջումները, ամենօրյա, ամենշաբաթյա, ամենամյա անընդմեջ հանգիստը սահմանվում են կողմերի համաձայնությամբ՝ առնվազն պահպանելով ՀՀ օրենսդրությամբ համապատասխան աշխատանքի համար սահմանված հանգստի նվազագույն

	տևողությունները: Այս առումով, հարկ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ ինչքան էլ, որ անձն իր կամաարտահայտությունը հայտնել է իր աշխատանքով կամավորություն անելու՝ դեռևս չի նշանակում, որ վերջինիս աշխատանքը պետք է չարաշահվի, ընդհուպ՝ վերջինիս առողջությանը վնասելով: Վերոգրյալ հիմնավորումներով է, որ նախագծի 13-րդ հոդվածով հստակ տարվել է տարանջատում կամավոր աշխատանքի հետ կապված հարաբերությունների ու աշխատանքային հարաբերությունների միջև: Մասնավորապես՝ կամավոր աշխատանքի հետ կապված հարաբերությունները համարվել են քաղաքացիական-իրավական հարաբերություններ, իսկ նույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պայմանագիրը՝ քաղաքացիական-իրավական բնույթի պայմանագիր: Հստակ ամրագրվել է նաև, որ այդ հարաբերությունները չեն համարվելու ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատանքային հարաբերություններ, իսկ պայմանագիրը՝ աշխատանքային պայմանագիր: *** Ինչպես արդեն նշվեց, Օրենքի նախագծի մշակումը բխում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջից, համաձայն որի՝ **կամավոր և օգնություն ցուցաբերելու նպատակով աշխատանքների կատարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով:** Այս առումով, Օրենքի նախագծով նախատեսվում է ամրագրել ոչ միայն կամավոր աշխատանքի, այլ նաև օգնություն ցուցաբերելու նպատակով կատարվող աշխատանքների վերաբերյալ որոշակի առանձնահատկություններ: Մասնավորապես, նախատեսվում է հստակ ամրագրել կամավոր աշխատանք կատարելու հետ կապված հարաբերություններն աշխատանքային հարաբերություններից, կամավոր աշխատանքն անօրինական կամ վարձու աշխատողի աշխատանքից տարանջատելու լիարժեք իրավական կարգավորումները, **կամավոր և օգնություն ցուցաբերելու նպատակով կատարված աշխատանքները** միմյանցից տարանջատելու մեխանիզմները: Հարկ է նշել, որ Աշխատանքի վիճակագիրների 19-րդ միջազգային կոնֆերանսի զեկույցում (ԱՄԿ, վիճակագրության ստորաբաժանում, 2013 թ.)

	նշվել է, որ ընտանիքի անդամների համար անհատույց աշխատանքը չպետք է հաշվարկվի որպես կամավոր աշխատանք, և կարևորվել է նաև, որ **ազգային մակարդակներում օրենսդրորեն որոշակիացվի ընտանիքի անդամին և ընտանեկան հարաբերությունների բնույթը:** **Ուսումնասիրված մի շարք երկրներում** ևս ընտանեկան և ազգակցական հարաբերությունների շրջանակներում կատարվող աշխատանքները **բացառվում են կամավոր աշխատանքների իրավական կարգավորումների դաշտից** (կամավոր աշխատանքները կարգավորող համապատասխան օրենքի գործողությունը չի տարածվում նման հարաբերությունների վրա), օրինակ, **Իսպանիայում, Պորտուգալիայում, Լյուքսեմբուրգում, Մոնտենեգրոյում, Բելգիայի Թագավորությունում, Սերբիայում, Էստոնիայում:** *** Հաշվի առնելով կամավոր աշխատանքի բնագավառի բազմազանությունը՝ իրականում հնարավոր չէ սպառիչ սահմանել այն ոլորտների ցանկը, որտեղ կամավոր աշխատանքը պարտադիր ապահովագրվի, և դրանով իսկ ապահովվի բոլոր կամավորների համար **ռիսկերից ապահովագրության երաշխիքների ապահովում**: Օրենքի նախագծով առանձնացված չեն նաև կամավոր աշխատանքի հստակ ոլորտներ: Օրենքի նախագծով նախատեսվել է ապահովագրության վերաբերյալ կարգավորումները սահմանել կամավոր աշխատանքի մասին պայմանագրով՝ հաշվի առնելով այն, որ տվյալ դեպքում, չի ենթադրվում, որ բոլոր կամավոր աշխատանքների համար են կամավորներն ունենալու ապահովագրություն: Այլ՝ ապահովագրության պայմաններն ու ծածկույթի շրջանակը կախված է լինելու հնարավոր ռիսկերի առկայությունից ու կատարվող աշխատանքների բնույթից և կարգավորվելու է կողմերի համաձայնությամբ՝ պայմանագրային կարգով: Միաժամանակ, նշենք, որ **Կազմակերպությունը կամավորին՝ կամավոր աշխատանքի հետ կապված դժբախտ դեպքերից, մասնագիտական հիվանդություններից, և այդ կամավորի քաղաքացիական պատասխանատվությունը՝ երրորդ անձանց վնաս պատճառելու ռիսկի հետ կապված ապահովագրությունը նախատեսվում է իրականացնել երկրում**

	ապահովագրական գործունեություն ծավալող ընկերություններից որևէ ընկերության միջոցով: Ապահովագրական ընկերությունների **(ինչպես, օրինակ, «Ռեսո» ԱԸ, «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ, «Նաիրի Ինշուրանս» ԱԸ)** կողմից առաջարկվող ապահովագրական ծածկույթներն ի թիվս այլ ծառայությունների ներառում են նաև երրորդ անձանց վնաս պատճառելու ռիսկի հետ կապված քաղաքացիական պատասխանատվությունից անձանց ապահովագրելու ծառայությունը: **Նշված մեխանիզմների նախատեսման համար հաշվի է առնվել ինչպես երկրում ապահովագրական համակարգի գործող մեխանիզմները, այնպես էլ ուսումնասիրված միջազգային փորձը**: Մասնավորապես՝ շատ երկրներում չկա իրավական պարտադիր պահանջներ՝ կամավորների ապահովագրության վերաբերյալ: Շատ դեպքերում, կամավորների պաշտպանությունը՝ դժբախտ դեպքերից, հիվանդությունից կամ երրորդ անձանց նկատմամբ պատասխանատվությունից ներառված է կազմակերպությունների պարտականություններում: Եթե ապահովագրություն չկա, կամավորն է պարտավորված լինում ապահովագրվելու: Մի շարք երկրներում, ապահովագրությունը խնդիր չի լինում, քանի որ անհատներն արդեն իսկ ապահովագրված են լինում պարտադիր առողջության ապահովագրության համակարգերում: **Այդպես է, օրինակ, Սլովենիայում, Էստոնիայում: Ֆրանսիայում,** կազմակերպություններն ապահովագրում են կամավորներին դժբախտ դեպքերից և հիվանդություններից սկսած 1993 թվականից: **Գերմանիայում** ապահովագրություն չկա կամավորների համար, սակայն ապահովագրական ծածկույթը ապահովվում է հատուկ ապահովագրությամբ՝ դաշնային նահանգների կողմից: **Ռումինիայում,** պարտադիր ապահովագրում է այն կազմակերպությունը, որը ներգրավում է կամավորներին: **Կիպրոսում և Լատվիայում,** օրինակ, չկա հատուկ ապահովագրություն կամավորների համար, չնայած այդպես է փոքրաթիվ երկրներում: **Ամփոփելով նշենք, որ Կազմակերպությունների համար պարտադիր ապահովագրություն է նախատեսված, օրինակ, Ֆրանսիայում, Ռումինիայում, Անգլիայում, միաժամանակ, հատուկ կամավորների համար չնախատեսված,**

	սակայն ընդհանուր առողջության ապահովագրության համակարգերի միջոցով կամ այլ ձևերով ապահովագրություն է նախատեսված, օրինակ, Սլովենիայում, Էստոնիայում, Չեխիայում, Հոլիանդիայում, Գերմանիայում, Լյուքսեմբուրգում: *** **Նախագծի հանրային քննարկումների ժամանակ** տարբեր հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից ներկայացվել է այն հանգամանքը, որ կամավոր աշխատանքը, հատկապես երիտասարդների շրջանում **ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության** հսկայական աղբյուր է, ինչպես նաև նշվել է, որ կամավորությունը օգնում է հաղթահարել գործազրկությունը՝ բարելավելով հատկապես առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող երիտասարդների գործունակության և զբաղունակության հմտությունները: Այս մասով, **ուսումնասիրվել են մի շարք երկրներում, այդ թվում՝ եվրոպական,** ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության շրջանակներում կամավորության արդյունքում ձեռք բերված գիտելիքներն ու փորձառությունը ճանաչելու, գնահատելու և փաստաթղթավորելու **միջազգային փորձը, մասնավորապես՝** **1. մի շարք երկրներում գնահատման համակարգը ներդրված է և բավականին զարգացած,** օրինակ, Բելգիայում, Բուլղարիայում, Դանիայում, Ֆինլանդիայում, Ֆրանսիայում, Լիտվայում, Պորտուգալիայում, **2. մի շարք երկրներում՝ համակարգը նոր է ներդրվում կամ զարգացման փուլում է,** օրինակ, Ավստրիայում, Չեխիայում, Հունգարիայում, Լյուքսեմբուրգում, Սլովենիայում, **3. կան երկրներ էլ, որ դեռևս չունեն նման գնահատման համակարգեր կամ օրենսդրական կարգավորումներ,** օրինակ, Գերմանիայում, Հունաստանում, Կիպրոսում, Իտալիայում, Հոլանդիայում, Լեհաստանում: Այսպիսով, հաշվի առնելով ինչպես միջազգային փորձը, այնպես էլ՝ ՀՀ կրթության ոլորտի համապատասխան օրենսդրական կարգավորումներն ու երկրում փաստացի այդ ուղղությամբ կատարվող աշխատանքները, Նախագծի

	լրամշակման փուլում, Նախագծի 5-րդ հոդվածով նախատեսված նպատակներում նախատեսվել են նաև այնպիսի նպատակներ, ինչպես օրինակ, անձի՝ մասնագիտական կողմնորոշմանը կամ կարիերայի պլանավորմանը, աշխատաշուկայում մրցունակությանն ուղղված զբաղունակության կամ առանցքային (փափուկ) հմտությունների զարգացմանն աջակցելը, ոչ ֆորմալ կամ ինֆորմալ կրթությամբ նոր գիտելիքներ, կարողություններ, հմտություններ ու փորձառություն ձեռք բերելուն, ինչպես նաև ձեռք բերված գիտելիքների, կարողությունների, հմտությունների պահպանմանն աջակցելը, «Կրթություն-աշխատաշուկա» արդյունավետ փոխառնչությանը, որակյալ աշխատուժի ձևավորմանը կամ աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանը նպաստելը, ինչպես նաև երիտասարդներին կամ առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող այլ անձանց՝ աշխատաշուկայի միտումներին ծանոթանալուն և աշխատաշուկայում ինտեգրվելուն աջակցելը: **Նշված նպատակները նախատեսվել են՝ կարևորելով ինչպես անձի, այնպես էլ՝ երկրի զարգացման հարցում, քաղաքացիների՝ ողջ կյանքի ընթացքում հարատև կրթության ու նրանց կենսամակարդակի բարձրացման հարցում ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության դերակատարումը**: Անձի՝ ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության հարցում էական նշանակություն կարող է ունենալ անձի՝ կամավոր աշխատանքների միջոցով ձեռք բերված գիտելիքները, կարողությունները, հմտություններն ու փորձառությունը ճանաչելն ու որոշակի գնահատման մեխանիզմների ամրագրումը: **Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ շատ երկրներում, ընդունված է ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթությունը կամավորության միջոցով, ինչպես** նաև շատ երկրներում արդեն իսկ **կրթական համակարգերում փորձեր են արվում կամավոր աշխատանքի ընթացքում ոչ ֆորմալ կրթությամբ ձեռք բերված գիտելիքների, կարողությունների, հմտությունների և փորձառության արժևորումն ու գնահատման մեխանիզմների ամրագրումը,** որը հնարավորություն կընձեռի որոշակի փաստաթղթավորման միջոցով՝ իրավական կարգավիճակ տալ կամավորների այդ գիտելիքներին, կարողություններին, հմտություններին և փորձառությանը:

Միևնույն ժամանակ, **կամավոր աշխատանքների համար օրենսդրական հիմքերի ամրագրմամբ հանրապետության մի շարք սոցիալական և կրթության ոլորտի խնդիրների լուծման համար մեծ հնարավորություններ կստեղծվեն,** օրինակ, անձանց՝ մասնագիտական կողմնորոշման և կարիերայի պլանավորման հարցում, «Կրթություն-աշխատաշուկա» անցումը դյուրինացնելու և առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող անձանց՝ աշխատաշուկայում ինտեգրվելու հարցում, որակյալ աշխատուժի ձևավորման և աշխատաշուկայում մրցունակության բարձրացման, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթությամբ նոր գիտելիքներ, կարողություններ, հմտություններ ու փորձառություն ձեռք բերելու, ինչպես նաև հատկապես տարեցների շրջանում՝ ձեռք բերված գիտելիքների, կարողությունների, հմտությունների պահպանմանն աջակցելու հարցում:

Նշենք նաև, որ **կամավորության արդյունքում ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթությամբ ձեռք բերված գիտելիքների, կարողությունների, հմտությունների կամ փորձառության** գնահատման և հետագայում փաստաթղթավորման համար կամավոր աշխատանքի բնագավառում համապատասխան իրավական հիմքերը նախատեսելու նպատակով, Նախագծով կամավորի համար՝ Կազմակերպությունից իր կատարած կամավոր աշխատանքի մասին տեղեկանք կամ երաշխավորագիր ստանալու վերաբերյալ իրավունք է նախատեսվել: Միաժամանակ, Կազմակերպությունների համար՝ կամավորի ցանկության դեպքում՝ կատարված կամավոր աշխատանքի մասին տեղեկանք կամ երաշխավորագիր նրանց տրամադրելու պարտականություն է նախատեսվել:

Այսպիսով՝ կամավորները, ցանկության դեպքում, **<u>կարող են կամավոր աշխատանքի ընթացքում ձեռք բերված գիտելիքների, կարողությունների, հմտությունների և փորձառության վերաբերյալ տեղեկանքներ կամ երաշխավորագրեր ունենալ, և ներառել ինչպես իրենց ինքնակենսագրականներում կամ CV-ներում</u>**, այնպես էլ՝ ներկայացնել ուսումնական հաստատություններին կամ տարբեր կազմակերպություններին կամ գործատուներին, կամ ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության արդյունքները գնահատող համապատասխան մարմնին կամ կազմակերպությանը: **<u>Հետևաբար,</u>**

	<u>Նախագծի ընդունման պարագայում անուղղակի ձևով կամրագրվեն նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության ոլորտում և այդ շրջանակներում ձեռք բերված գիտելիքների, կարողությունների, հմտությունների և փորձառության արդյունքների գնահատման և ճանաչման, ներառյալ փաստաթղթավորման համար որոշակի իրավական հիմքեր</u>, որոնք կարող են հիմք հանդիսանալ երկրում այդ արդյունքների գնահատման և ճանաչման հարցում անհրաժեշտ և համակարգված մեխանիզմների համապարփակ կարգավորումների ամրագրման և արդեն իսկ սահմանված օրենսդրական դաշտի կատարելագործման համար: *** Կամավոր աշխատանքի օրենսդրական կարգավորման համապատասխան հիմքեր և միասնական օրենսդրական կարգավորումներ ապահովելու նպատակով՝ **Օրենքի նախագիծը ներկայացվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին», ««Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքում լրացում կատարելու մասին», ««Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Բարեգործության մասին» օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Հիմնադրամների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Պրոբացիայի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», ««Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին», ««Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», ««Օտարերկրացիների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», ««Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Պետական նպաստների մասին» օրենքում լրացում կատարելու մասին», ««Պետական կենսաթոշակների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթով:**

Մասնավորապես՝

1) Օրենքի նախագծով կամավորների համար նախատեսվում են կամավոր աշխատանքի շրջանակներում օրենքով սահմանված պարտականությունները կատարելիս կրած վնասի հատուցման երաշխիքներ: Նշվածով պայմանավորված՝ **ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նախատեսվող լրացումներով** ապահովվում է նշված երաշխիքների իրացման համար իրավական հիմքերի առկայությունը:

2) ՀՀ հարկային օրենսգրքով (147-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետ) ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմաների սահմաններում աշխատանքային պայմանագրերի շրջանակներում աշխատանքների կատարման հետ կապված փոխհատուցման վճարները (այդ թվում՝ դիվանագիտական ծառայողների փոխհատուցման վճարների), բացառությամբ աշխատանքից ազատվելու դեպքում չօգտագործված արձակուրդի փոխհատուցման վճարները, համարվում են նվազեցվող եկամուտներ (նվազեցումներ): **ՀՀ հարկային օրենսգրքում առաջարկվող փոփոխություններով** նախատեսվում է նման կարգավորում ամրագրել նաև կամավոր աշխատանքների կատարման հետ կապված գործուղման ծախսերի համար: **Միջազգային փորձի ուսումնասիրությամբ** պարզվել է, որ կամավորության հետ կապված կազմակերպությունների ծախսերը ոչ ձեռնարկատիրական գործունեության մասով **չեն հարկվում մի շարք երկրներում,** ինչպես, օրինակ, **Իտալիայում, Սլովենիայում, Հունգարիայում, Լյուքսեմբուրգում, Շվեդիայում, Մեծ Բրիտանիայում:** Հարկ է նշել, որ սույն նախագծով **կամավոր աշխատանքի հետ կապված ծախսերից միայն գործուղման ծախսերի նվազագույն չափերով է տրվում արտոնություն՝ նվազեցվող եկամուտ համարել՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ այդ ծախսերը հստակ սահմանված են** ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ: **Ինչը հնարավորինս կնվազեցնի տարբեր ֆինանսական չարաշահումների և հարկային պարտավորություններից խուսափելու ռիսկերը:** Մեկ այլ փոփոխությամբ, Հարկային օրենսգրքի 412-րդ հոդվածում համապատասխան կարգավորումներ են լրացվում, որպեսզի այն դեպքերում, երբ կամավորները կամավոր

	աշխատանքների ներգրավվեն առանց կամավոր աշխատանքի մասին պայմանագրի (որպիսի դեպքերում անօրինական աշխատողները և տվյալ կամավոր աշխատանքի ներգրավվող անձինք տարանջատելի չեն լինի)՝ **կիրառվեն նույնական պատասխանատվության մեխանիզմներ՝ ինչ անօրինական աշխատողներ ունենալու դեպքում է կիրառվում:** 3) Օրենքի նախագծով նախատեսվել է, որ կազմակերպությունը կամ կամավորը պարտավոր է չտարածել կամ չհրապարակել կամավոր աշխատանքը կատարելու ընթացքում իրեն հայտնի դարձած անձնական տվյալների, այդ թվում՝ մարդու կյանքի, առողջության մասին կամ պետական, բանկային, ապահովագրական, առևտրային, բժշկական, փաստաբանական կամ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող այլ տեղեկությունները: Այս առումով համապատասխան իրավական հիմքերն են լրացվում նաև **«Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 7-րդ մասում՝ նախատեսելով,** որ անձնական տվյալներ մշակողները կամ նույն օրենքով նախատեսված այլ անձինք պարտավոր են պահպանել անձնական տվյալների գաղտնիությունը ինչպես անձնական տվյալները մշակելու հետ առնչվող ծառայողական կամ աշխատանքային **կամ կամավոր աշխատանքի շրջանակներում օրենքով սահմանված** պարտականությունները կատարելու ընթացքում, այնպես էլ դրա ավարտից հետո: **4)** Օրենքի նախագծի 17-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվել է, որ կամավոր աշխատանքի բնագավառում ՀՀ պետական կառավարման համակարգի լիազոր մարմնի լիազորություններից են **կամավոր աշխատանքի բնագավառի պետական քաղաքականության մշակումն ու իրականացումը:** Հիմք ընդունելով **ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի և 159-րդ հոդվածի կարգավորումները**՝ առ այն, որ պետական կառավարման համակարգի մարմիններն են նախարարությունները, ինչպես նաև Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա այլ մարմիններ, **որոնց կազմավորման կարգը և լիազորությունները սահմանվում են օրենքով**, և այն, որ **«Կառավարության կառուցվածքի և գործունեության**

	մասին» ՀՀ օրենքի հավելվածի 1-ին մասով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն է վերապահված աշխատանքի և բնակչության զբաղվածության բնագավառում Կառավարության քաղաքականության մշակումը և իրականացնումը, նույն օրենքի նույն կարգավորման մեջ համապատասխան նախագծով նախատեսվել է, **որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը վերապահվի նաև կամավոր աշխատանքի բնագավառի քաղաքականության մշակումն ու իրականացումը**: 5) **«Բարեգործության մասին» ՀՀ օրենքում խմբագրվում է** կամավորի հասկացությունը («կամավոր» հասկացությունն ամբողջական սահմանվում է Օրենքով), Օրենքով սահմանվում է բոլոր կամավորների (այդ թվում՝ բարեգործական որակված ծրագրերի շրջանակներում ներգրավված) համար երաշխիքների, իրավունքների և պարտականությունների, պատասխանատվության հստակ և միասնական շրջանակ, ինչպես նաև պայմանագրային կարգավորումների ապահովում: 6) **«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով** հասարակական կազմակերպությունների կողմից կամավորներ ներգրավելու, կամավորների հետ պայմանագրեր կնքելու, կամավորների ներգրավվման վերաբերյալ այլ կարգավորումները փոփոխությունների արդյունքում կմիասնականացվեն՝ դրանով իսկ ամրագրելով կամավոր ներգրավելու իրավասություն ունեցող բոլոր կազմակերպությունների և կամավորների համար միասնական, հավասար հնարավորություններ, իրավական, սոցիալական և այլ երաշխիքներ: Կնախատեսվի նաև պայմանագրի կնքում մինչև շաբաթական 20 ժամ կամավոր աշխատանք կատարող կամավորների համար՝ վերջիններիս համար ևս ապահովելով այն իրավական, սոցիալական և այլ երաշխիքները, որոնցից զրկված են առկա օրենսդրական կարգավորումների պայմաններում: 7) **«Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով** նախատեսված չէ կամավոր աշխատանքների հետ կապված որևէ կարգավորում, մինչդեռ ինչպես գործող օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Բարեգործության մասին» ՀՀ օրենքով, այնպես էլ՝ Նախագծերի փաթեթով հիմնադրամները, ինչպես, որ

	հասարակական կազմակերպությունները՝ **որպես ոչ առևտրային կազմակերպություն, օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրավունք ունեն Նախագծի ընդունումից հետո էլ՝ իրավունք են ունենալու ներգրավելու կամավորներ:** Նշվածով պայմանավորված և հիմք ընդունելով այն, որ Նախագծերի փաթեթում համանման կարգավորում է նախատեսվում նաև «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, **«Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքում համապատասխան նախագծով առաջարկվում է** լրացնել կարգավորում, համաձայն որի՝ հիմնադրամը կարող է իր աշխատանքներում օրենքով սահմանված դեպքերում և կարգով ներգրավել կամավորների: 8) **«Պրոբացիայի մասին» օրենքի գործող կարգավորումներով** սահմանված են պրոբացիայի ծառայության կամավորի վերաբերյալ որոշակի կարգավորումներ, մասնավորապես սահմանված է պրոբացիայի ծառայության կամավորի հասկացությունը, նախատեսված են պայմանագրային կարգավորումներ և այդ կամավորների համար որոշակի իրավունքներ և պարտականություններ: Հետևաբար, հիմք ընդունելով այն, որ Օրենքի նախագծով և դրանից բխող մի շարք օրենքներում փոփոխությունների նախագծերի փաթեթով նպատակադրվում է կամավոր աշխատանքի համար միասնական իրավական կարգավորումների սահմանումն ու առկա իրավական հիմքերի ներդաշնակեցումը, նախագծերի փաթեթում ներառվել է նաև **«Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխությունների նախագիծ,** որով նախատեսվում է պրոբացիայի ծառայության կամավորների հետ կապված հարաբերությունները ևս կարգավորել Օրենքի նախագծով առաջարկվող միասնական կարգավորումների ներքո: 9) Օրենքի նախագծով նախատեսվում է կամավոր աշխատանքի հետ կապված վեճերը դատական կարգով լուծելու վերաբերյալ կարգավորում: **«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում կատարվող լրացմամբ** կամավոր աշխատանքի հետ կապված վեճերով հայցվորների համար կամարագրվի

	դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվելու վերաբերյալ երաշխիք: 10) **«Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին»** ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փրկարար ուժերն ստեղծվում են որպես մասնագիտացված ուժեր կամ որպես կամավոր ուժեր: Նույն օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ փրկարարական աշխատանքներ իրականացնելիս կամավոր փրկարարի առողջությանը, կյանքին հասցված վնասը հատուցվում է պետության կողմից, կամ նրան տրվում է ապահովագրական գումարը: Լիազոր մարմնի հայտով արտակարգ իրավիճակի վայր մեկնելու դեպքում կամավոր փրկարարն ազատվում է աշխատանքային պարտականությունների կատարումից պետական կամ հասարակական պարտականությունների կատարման համար: Օրացուցային տարվա ընթացքում մինչև 15 աշխատանքային օր ժամկետով արտակարգ իրավիճակի վայր մեկնելու դեպքում կամավոր փրկարարին փոխհատուցում է պետությունը ՀՀ կառավարության սահմանած կարգով և չափով: Նշված կարգը սահմանված է ՀՀ կառավարության 22.02.2018 N 186-Ն որոշման հավելվածով, որի 3-րդ կետի համաձայն՝ օրացուցային տարվա ընթացքում մինչև 15 աշխատանքային օր ժամկետով լիազոր մարմնի հայտով արտակարգ իրավիճակի վայր մեկնելու դեպքում պետական կամ հասարակական պարտականությունների կատարման համար աշխատանքային պարտականությունների կատարումից ազատված կամավոր փրկարարին ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին **փոխհատուցվում (վճարվում) է նրա հիմնական աշխատավայրում վերջինիս համար սահմանված միջին աշխատավարձը**՝ հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հաշվարկը: Տվյալ դեպքում կամավոր փրկարարների համար ՀՀ ազգային օրենսդրությամբ սահմանված կամավոր աշխատանքի համար մինչև 15 օրացուցային օր ժամանակահատվածով կամավորության դեպքում, դուրս է Նախագծով նախատեսված կամավոր աշխատանքի սկզբունքից, ինչպես նաև այդ

	փոխհատուցման կարգավորումները չեն համապատասխանում նաև Նախագծի 12-րդ հոդվածով նախատեսված կամավոր աշխատանքի հետ կապված ծախսերի փոխհատուցման ընթացակարգին: Նախատեսվում է նաև կարգավորում, համաձայն որի՝ այն անձինք, ովքեր աշխատանքային հարաբերությունների շրջանակներում աշխատավարձ են ստանում ՀՀ պետական կամ համայնքային բյուջեներից, սահմանված կարգով փրկարարական աշխատանքների իրականացմանը՝ որպես կամավոր, կարողանան ներգրավվել նաև աշխատանքային ժամերին՝ գործատուի գրավոր համաձայնությամբ: Ընդ որում, նախատեսվում է, որ աշխատանքային ժամերին կատարված կամավոր աշխատանքի ժամանակահատվածում աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող անձանց աշխատատեղը (պաշտոնը) և աշխատավարձն ամբողջությամբ պահպանվելու են: Այս մասով հաշվի է առնվել ինչպես ոլորտի առանձնահատկությունը և գերակայությունը, այնպես էլ քաղպաշտպանության մասով հնարավորինս բնակչության լայն զանգվածների ներգրավման հնարավորության ընձեռումը: Հետևաբար, հաշվի առնելով ինչպես միջազգային նորմերով սահմանված սկզբունքները, այնպես էլ՝ ՀՀ ազգային օրենսդրությամբ կամավոր աշխատանքների համար միասնական նորմերով կարգավորումներ նախատեսելու նպատակադրումը՝ համապատասխան փոփոխություններ են առաջարկվում նաև **«Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին»** ՀՀ օրենքում: **«Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխությունների** նախագիծը սույն նախագծերի փաթեթում ներառելու նպատակահարմարությունը և նախագծի բովանդակությունը մի շարք աշխատանքային հանդիպումների ընթացքում լայնորեն քննարկվել և համաձայնեցվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հետ, այնուհետև՝ նախագծերի լրամշակման փուլում ներառվել փաթեթում: 11) Օրենքի նախագծի 20-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվում է, որ Կազմակերպությունը ՀՀ տարածքում «Կամավոր աշխատանքի մասին» օրենքով սահմանված կարգով կամավոր աշխատանք կատարելու նպատակով կարող է

	հրավիրել օտարերկյա քաղաքացիներ՝ նույն օրենքով **կամ այլ օրենքով** սահմանված կարգով: Այս առումով հարկ է նշել, որ «**Օտարերկրացիների մասին» օրենքով նախատեսված չեն կամավոր աշխատանք կատարելու նպատակով ժամանած օտարերկրյա քաղաքացիներին կացության կարգավիճակ տրամադրելու հիմքերը**, ինչը կարող է հանգեցնել վերջիններիս Հայաստանի Հանրապետությունում գտնվելու օրինական հիմունքներով ձևակերպելու անհնարինությանը: Հետևաբար նախագծերի փաթեթում ներառվել է **«Օտարերկրացիների մասին» օրենքում համապատասխան փոփոխությունների նախագիծը**: **Օրենքի գործող կարգավորմամբ ժամանակավոր կացության կարգավիճակը տրվում է յուրաքանչյուր օտարերկրացու, եթե նա հիմնավորում է, որ գոյություն ունեն ՀՀ տարածքում մեկ տարի և ավել ժամկետով իր բնակվելը հիմնավորող հանգամանքներ:** Լրացման արդյունքում այդպիսի հանգամանքներից է դիտարկվելու նաև օրենքով սահմանված դեպքերում և կարգով կնքված **կամավոր աշխատանքի մասին պայմանագրով կամավոր աշխատանք կատարելու հանգամանքը**: Հարկ է նշել նաև, որ Օրենքի նախագծի փաթեթի շրջանառության ժամանակ տեղի ունեցած միջգերատեսչական քննարկումների արդյունքում, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ կամավորները հանդիսանալու են կամավոր աշխատանքի սուբյեկտ, այլ ոչ թե աշխատող, վերջիններիս մասով կարգավորումներ նախատեսվել են ոչ թե օրենքի 23-րդ հոդվածում (աշխատանքի թույլտվություն ստանալու բացառություններում), այլ՝ օրենքի 15-րդ հոդվածում **(ժամանակավոր կացության կարգավիճակ տրամադրելու հիմքերում)՝ համապատասխան հիմքը լրացնելու միջոցով,** և այդ հիմքով լրացնելու համատեքստում նաև լրացումներ և փոփոխություններ են կատարվել օրենքի մի շարք այլ կարգավորումներում: 12) Նախագծերի փաթեթում ներառված է նաև **««Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը,** որով սահմանվում է, որ տվյալ օրենքի իմաստով պայմանագրային եկամուտ չի համարվում «Կամավոր աշխատանքի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված կազմակերպության

	կողմից կամավորին նույն օրենքով սահմանված դեպքերում և կարգով վճարված եկամուտը (ֆինանսական կամ գույքային միջոցների կամ կամավոր աշխատանքներից բխող լրացուցիչ ծախսերի փոխհատուցման կամ իր բնակության վայրից (քաղաք կամ գյուղ) դուրս կամավոր աշխատանք կատարելու դեպքում կատարված ծախսերի հատուցման): 13) Օրենքի նախագծով կամավոր աշխատանքի մասին պայմանագիրը որակվում է քաղաքացիաիրավական պայմանագիր: Հարկ է նշել, որ վերջինիս շրջանակներում կամավորի կողմից կատարվող աշխատանքն անհատույց է, և նա միայն ստանում է կամավոր աշխատանքի կատարման համար ֆինանսական կամ գույքային միջոցների կամ կամավոր աշխատանքներից բխող լրացուցիչ ծախսերի փոխհատուցում կամ իր բնակության վայրից (քաղաք կամ գյուղ) դուրս կամավոր աշխատանք կատարելու դեպքում կատարված ծախսերի հատուցում, որոնք սակայն հարկային օրենսդրության կարգավորումներով որակվում են որպես եկամուտ: Այս առումով, համապատասխան առանձնահատկություններ նախատեսելու և կամավոր աշխատանք կատարող անձանց այլ եկամտահարկ վճարողներից տարանջատելու համատեքստում, ապա անհրաժեշտություն է առաջացել համապատասխան փոփոխություններ նախատեսել նաև **«Պետական նպաստների մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» օրենքներում:** *** Ամփոփելով նշենք նաև, որ կամավոր աշխատանքի համար Օրենքի նախագծով նախատեսված կարգավորումները մշակվել են հաշվի առնելով նաև Կայուն զարգացման նպատակները և կամավորի ինստիտուտի դերը նշված նպատակներն իրացնելու հարցում:
5.	**Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ**
	1) ՀՀ կառավարության 18.08.2021 N 1363-Ա որոշման հավելվածով սահմանված (հավանության է արժանացել ՀՀ Ազգային ժողովի 2021 թ. օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ) ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի 4-րդ՝ «Մարդկային

	կապիտալի զարգացում» բաժնի 4.6-րդ «Աշխատանք և սոցիալական պաշտպանություն» ենթաբաժնում նախատեսվել է ամրագրել կամավորական գործունեությունը և կամավոր աշխատանքը կարգավորող միասնական իրավական մեխանիզմներ: 2) ՀՀ կառավարության 18.11.2021 N 1902-Լ որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության 2021-2026 թթ. գործունեության միջոցառումների ծրագրի 1-ին հավելվածի 4-րդ՝ «Կամավորության մշակույթի տարածման և խրախուսման նպատակով՝ կամավորական գործունեությունը և կամավոր աշխատանքը կարգավորող միասնական իրավական մեխանիզմների ամրագրում» նպատակի շրջանակներում նախատեսվել է 4.1-ին՝ ««Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագծի և դրանից բխող ՀՀ մի շարք օրենքներում փոփոխություններ նախատեսող օրենքների նախագծերի փաթեթի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ» միջոցառումը, որի համար վերջնաժամկետ է նախատեսվել 2022 թ. մարտի 3-րդ տասնօրյակը: 3) Հաշվի առնելով այն, որ հասարակության սոցիալ-տնտեսական կյանքին մասնակցելու, մարդկային և սոցիալական կապիտալ ձևավորելու և աշխատաշուկային ծանոթանալու արդյունավետ միջոցներից է կամավորությունը, ՀՀ կառավարության 05.12.2019 N 1753-Լ որոշման 1-ին հավելվածով հաստատված «Աշխատի'ր, Հայաստան» ռազմավարությամբ նախատեսվել է կամավորության ինստիտուտի զարգացմանն ուղղված օրենսդրական և ինստիտուցիոնալ կարգավորումների մշակում և ներդրում (1-ին նպատակ, 1.7-րդ գործողություն) միջոցառումը:
6.	**Ենթաօրենսդրական ակտերում փոփոխություններ, միջազգային պայմանագրերին համապատասխանություն**
	1. «Կամավոր աշխատանքի մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», ««Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքում լրացում կատարելու մասին», ««Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում

	փոփոխություն կատարելու մասին», ««Բարեգործության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», ««Հիմնադրամների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Պրոբացիայի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», ««Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին», ««Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», ««Օտարերկրացիների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», ««Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Պետական նպաստների մասին» օրենքում լրացում կատարելու մասին», ««Պետական կենսաթոշակների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի ընդունմամբ անհրաժեշտ է՝ • **համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 20-ի «Բարեգործների տրամադրած բարեգործական աջակցության և կամավորների կատարած աշխատանքի հաշվառման կարգը սահմանելու մասին» N 274-Ն որոշման մեջ,** • **ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի պետական ծառայության կամավորներին ներկայացվող չափորոշիչները և նրանց ներգրավման կարգը սահմանելու մասին» N 189-Ն որոշումը,** • **ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Օրացուցային տարվա ընթացքում մինչև 15 աշխատանքային օր ժամկետով արտակարգ իրավիճակի վայր մեկնելու դեպքում կամավոր փրկարարին պետության կողմից փոխհատուցման կարգը և չափը սահմանելու մասին» N 186-Ն որոշումը,** • **համապատասխան լրացումներ կամ փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 9-ի «Օրենսդրական ակտի և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման վերաբերյալ**

	<u>պաշտոնական պարզաբանում տվող պետական կառավարման համակարգի մարմինների և համապատասխան բնագավառների ցանկը սահմանելու մասին» N 1159-Ն որոշման մեջ,</u> • **<u>համապատասխան լրացումներ կամ փոփոխություններ կատարել ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 700-Լ որոշման մեջ,</u>** • **<u>համապատասխան լրացումներ կամ փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 11-ի ««Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 665-Ն որոշման մեջ:</u>** *** **Վերոնշյալ փոփոխությունները նախատեսվում է իրականացնել «Կամավոր աշխատանքի մասին» օրենքի ընդունումից հետո եռամսյա ժամկետում՝ մինչև նույն օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով ուժի մեջ մտնելը:** Միաժամանակ, նախատեսվում է **ՀՀ կառավարության 25.02.2021 N 252-Լ որոշման հավելվածի 106-րդ կետով սահմանված ընթացակարգով՝** օրենքը հրապարակվելուց հետո 20-օրյա ժամկետում, **ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնել օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին վարչապետի որոշման նախագիծ:** 2. «Կամավոր աշխատանքի մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին», ««Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքում լրացում կատարելու մասին», ««Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Բարեգործության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», ««Հիմնադրամների մասին» օրենքում լրացումներ

	կատարելու մասին», ««Պրոբացիայի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», ««Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին», ««Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», ««Օտարերկրացիների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», ««Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Պետական նպաստների մասին» օրենքում լրացում կատարելու մասին», ««Պետական կենսաթոշակների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը **չեն հակասում միջազգային պայմանագրերով ՀՀ ստանձնած պարտավորություններին**:
7.	**Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք**
	Օրենքի նախագիծը մշակվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից:
8.	**Ակնկալվող արդյունքը**
	Օրենքի ընդունմամբ կամրագրվեն կամավոր աշխատանքի ամբողջական և միասնական օրենսդրական կարգավորումները, ինչպես նաև կամավորության ինստիտուտի կայացման և մշակույթի տարածման համար անհրաժեշտ պայմաններն ու մեխանիզմները: Մասնավորապես՝ **1. Օրենքի ընդունմամբ կամավորի համար կամրագրվեն՝** • Կամավորության իրավական հիմք (կամավոր աշխատանքի մասին պայմանագիր, տեղեկանք, երաշխավորագիր), • կամավորի կարգավիճակ, • իրավունքների դատական պաշտպանություն և այդ մասով պետական տուրքերից ազատում, • ծախսերի հատուցման իրավունք, • վնասի հատուցման իրավունք, • առողջության և անվտանգության ապահովման երաշխիքներ, • ապահովագրության հնարավորություն,

	• Նոր գիտելիքներ և մասնագիտական փորձառություն ձեռք բերելու հնարավորություն: **2. Օրենքի ընդունմամբ կազմակերպությունների համար կնախատեսվեն՝** • իրենց աշխատողներից բացի կամավորների աշխատանքը օգտագործելու իրավունք, • ծախսերի հատուցման մասով որոշակի հարկային արտոնությունների սահմանում (միայն գործուղման ծախսերի նվազագույն չափերի մասով, որոնք հստակ սահմանված են ՀՀ օրենսդրությամբ), • արտակարգ իրավիճակներում արագ գործելու հնարավորություն, • վեճերի դատական կարգով լուծում և այդ մասով պետական տուրքերից ազատում, • կամավորների միջոցով հանրային խնդիրների լուծում: 3. **Օրենքի ընդունմամբ հիմնականում կամրագրվեն՝** • միասնական կարգավորումներ՝ մեկ օրենքի շրջանակներում (ներկայում կան քիչ և իրար չհամապատասխանող, ոչ ամբողջական կարգավորումներ՝ տարբեր օրենքներով), • կամավորության մշակույթի տարածման և կամավորների ներուժի օգտագործման համար անհրաժեշտ իրավական մեխանիզմների ամրագրում, • կամավորների աշխատանքը օգտագործելու հնարավորություն, • արտակարգ իրավիճակներում մեծ թվով մարդկանց (կամավորներին) արագ ներգրավելու հնարավորություն, • կամավոր աշխատանքի արդյունքում մասնագիտական փորձառության ձեռք բերում, որը կնպաստի նաև զբաղվածության ապահովմանը, որակյալ աշխատուժի ձևավորմանը կամ աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանը:
10.	**Ինչ խնդիր ենք լուծում՝**
	• Կամավոր աշխատանքի միասնական կարգավորումների ամրագրում,

	• ՀՀ աշխատանքային օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի կատարում, • «Երիտասարդների անդրազգային երկարաժամկետ կամավորական ծառայության խթանման մասին» Եվրոպական կոնվենցիայով նախատեսված միջազգային նորմերի ապահովում, • «Կամավորականությանն աջակցելու» ՄԱԿ-ի հանձնարարագրով նախատեսված միջազգային պարտավորությունների ապահովում, • Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 14-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ նախատեսված միջազգային նորմերի ապահովում, • ՄԱԿ-ի կայուն զարգացման 17 նպատակների իրացման հարցում նաև կամավորներին ներգրավելու մեխանիզմների ամրագրում, • Կառավարության 05.12.2019 N 1753-Լ որոշման 1-ին հավելվածով հաստատված՝ «Աշխատի՛ր, Հայաստան» ռազմավարության միջոցառման կատարում: